ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 օգոստոսի 2022 թվականի N 1352 - Ա

ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածով և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հաշվեկշռում Հայաստանի Հանրապետության 2003-2007 թվականների պետական բյուջեների «Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին» ծրագրի մնացորդ հաշվառված գույքից և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի նոյեմբերի 7-ի N 1555-Ն որոշման շրջանակներում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության բնակելի տների և բնակարանների կահավորման նպատակով ձեռք բերված և չօգտագործված գույքից անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով ամրացնել՝

1) «Գավառի մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) «Գյումրու «Երեխաների տուն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) «Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) «Երևանի «Ձատիկ» երեխաների աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն N 5 հավելվածի.

6) «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն N 6 հավելվածի.

7) «Երևանի «Մանկան տուն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն N 7 հավելվածի.

8) «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն N 8 հավելվածի.

9) «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն N 9 հավելվածի.

10) «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն N 10 հավելվածի.

11) «Նորքի տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն N 11 հավելվածի.

12) «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն N 12 հավելվածի.

13) «Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն N 13 հավելվածի.

14) «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն N 14 հավելվածի.

15) «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն N 15 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն ամրացված և օգտագործված գույքից հետ վերցնել և սեփականության իրավունքով ամրացնել՝

1) «Գավառի մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն N 16 հավելվածի.

2) «Գյումրու «Երեխաների տուն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն N 17 հավելվածի.

3) «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն N 18 հավելվածի.

4) «Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն N 19 հավելվածի.

5) «Երևանի «Ջատիկ» երեխաների աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն N 20 հավելվածի.

6) «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն N 21 հավելվածի.

7) «Երևանի «Մանկան տուն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն N 22 հավելվածի.

8) «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն N 23 հավելվածի.

9) «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն N 24 հավելվածի.

10) «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն N 25 հավելվածի.

11) «Նորքի տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն N 26 հավելվածի.

12) «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն N 27 հավելվածի.

13) «Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն N 28 հավելվածի.

14) «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն N 29 հավելվածի.

15) «Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ համաձայն N 30 հավելվածի:

3. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում, պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենների հետ համատեղ, ապահովել որոշմամբ նշված գույքի համապատասխան պայմանագրերի կնքումը և հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը՝ բոլոր ծախսերն իրականացնելով պետական ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսական միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Երևան

26.08.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ